

ՄԵԼԻ

Տարեկան դիմել 10 րուբլի, կես տարվան 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

ՏԵԼԵՖՈՆ № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւնը ընդունում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են

խաւրսանիւր բառին 2 կոպեկ.

ՏԵԼԵՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՐՈՒՆԵՐ

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Հայտարարութիւնն էլ պէտք է մասնակցել.—
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պէտք է վերակազմել.
Հայոց թատրոն. Նամակ Բաղրուշ. Նամակ Գու-
շուց. Նամակներ խմբագրութեան. Ներքին լու-
չուց. ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղե-
րներ. Նամակ Թիֆլիսից. Նամակ Պարս-
կաթիւնից. Արտաքին լուրեր. խմբ. ԼՈՒՐԵՐ.
Կատարող. Ստալին. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
Մ. — ԶԵՆՈՒԹԻՒՆ. — ԲՈՐՍԱ. — ՆԵՐՔԻՆ Կ և Ի-
լան Վարդանյան.

ՀԱՍՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՄ

Մեր հայտարարութիւնը սաստիկ սիրում
է իրանից հեռացնել ամեն մի մեծ ձեռ-
նարկութեան իրագործելու հոգը և սպա-
սել այդ բանը կատարելութեան: Եթէ,
օրինակ, խօսք է բացվում բարեբե-
ղաբանութեան առողջապահական պա-
մանները, բանալ հիւանդանոցներ և ա-
յաւարտարաններ, հիմնել զանազան կարգի
դպրոցներ, լաբորատորիաներ և կայարան-
ներ, լաւացնել հաղորդակցութեան գրու-
թիւնը, ամեն անգամ մենք աշխատում
ենք լիտ քաշվել սպարեղից, ասելով թէ
այդ հոգները պէտք է ծանրանան կառա-
վարութեան, պետութեան վրա: Անցնում
են տարիներ, կարիքները բաւարարութիւն
չեն ստանում, և ծնելով նոր կարիքներ
բարդվում են. իսկ մենք պիտի բռնած
մեր այն տեսակետը մի նշանաւոր մասը
գործադրել այն նպատակները համար, ո-
րոնք նպատակ են տեղական զարգաց-
ման: Սակայն այդ պահանջը դնելով բա-
ւականաւոր և անգործ նստել, — անմեղք լինել
Ռուսաստանի պետական բեռնակշիւրը այժմ

Հասնում է ահազին գումարի: Ահա մի
քանի տարի է, որ մուտքը առանձին և
էլքը առանձին աւելի են, քան մի-մի մի-
լիարդ բուրլի: Ներկայ 1898 թւի նախա-
հաշուով սպասվում է մուտք 1,364 մի-
լիոն բուրլի, և ծախք 1,350 միլիոն բուր-
լի, ուրման 14 միլիոն բուրլի աւելորդ
արդիւնք: Սակայն առանձին նախահաշուով
արտակարգ ծախքերի համար նշանակված
է դարձեալ 120 միլիոն բուրլի, որը եթէ
ծախսվի, այն ժամանակ պետութիւնը կու-
նենայ 106 միլիոն բուրլու զեֆիցիտ: Որ-
տեղից պէտք է ծածկել այդ զեֆիցիտը.
Քննչ նոր միջոցներով, ինչ տուրքեր և հար-
կեր սահմանելով: Ահա մի շարք կարևոր
հարցեր, որոնք զբաղեցնում են պետական
բեռնակշիւրը վրա հսկողներին, և պէտք է
զբաղեցնեն ամեն մի քաղաքացու:

Հասնանալի է, որ ամեն մի նոր պա-
հանջ, ամեն մի նոր կարիք, որ երևան է
լալիս կեսնքի մէջ, պէտք է կարողանալ
և համապատասխան ձեռնարկութիւնների
համար գումարներ հնարել: Այդ գումար-
ները պէտք է ապա դարձեալ երկրի, գոր-
ծեալ պետութեան մէջ սպարող ժողովուր-
դը: Մեր կառավարութիւնը, սկսած վաթ-
սուական թւականներից, մտցնելով Ռուսաս-
տանի մեծ մասի մէջ զեմստվո և քաղա-
քային ինքնավարութիւն, նրանց
յանձնեց տեղական կարիքներին հոգա-
նել թող տուէր, որ այդ հիմնարկութիւնները
դնեն հարկեր ազգաբնակչութեան վրա տե-
ղական կարիքների համար: Փորձը ցոյց
տուէր, որ զեմստվոյի և քաղաքային ինք-
նավարութիւնները իրագործեցին այն, ինչ
մեծ դժուարութեամբ և մեծ ծախսերով էր
այդուցում կառավարութեան: Տեղական օր-
գանները մօտ լինելով երկրին և ազգաբնա-
կչութեան, անմիջապէս հսկելով տուրքերի
ժողովուրդը և ծախսերի վրա, նոյն իսկ զգա-
լի խնայողութիւններ մտցրին ամբողջ տը-
նութեան մէջ, որով աւելացրին այն
գումարները, որոնք պէտք է ծառայէին մի

շարք հիմնարկութիւնների և ծրագրերի
իրագործման:

Մենք ունենք քաղաքային ինքնավարու-
թիւն և կարողացել ենք մեր քաղաքների
տնտեսութեան մէջ մտցնել մի քանի բա-
րեփոխութիւններ. բայց գրանից կառավա-
րութիւնը համարութեամբ է նայում դե-
պի զեմստվոյի հիմնարկութիւնների մտցնե-
լը մեր երկրում: Ձեմստվոն, որ նահանգի
տնտեսութեան է վերաբերում, կը տալ մեր
ժողովուրդի ձեռքը մի մեծ գործադրի մար-
մին, որով կարելի կը լինի իրագործել կրթա-
կան և արդիւնագործական մի շարք ծրա-
գրներ: Կառավարութիւնը մի կողմից, զեմս-
տվոյի և ինքնավարական հիմնարկութիւն-
ները միւս կողմից միմեանց լրացնելով, կը
լցնեն մեր երկիրը այն հիմնարկութիւննե-
րով, որոնց բացակայութիւնը արգելք է
լինում մեր արագ զարգացման և երկրի
բարգաւաճման:

Ձե կարելի է չը պէտք է ձեռքերը ծա-
լած նստել և սպասել, որ ամեն բան կա-
ռավարութիւնն անէ: Ճշմարիտ է, երկար
տարիների ընթացքում ժողովուրդը վար-
ժվեց անգործութեան, սովորեց ոչինչ
չանել և ամեն բան կառավարութիւնից
սպասել. բայց ժամանակ չէ միթէ փոխել
այդ սխալ ընթացքը և վարժվել սեփական
ոյժերով, և տեղական օրգաններին այն է
քաղաքային ինքնավարութիւնների և զեմ-
ստվոյների միջոցով ինքնագործունէութիւն
ցոյց տալ և հոգալ սեփական կարիքների
գէթ մի մասը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՄ

Մի տարրական ճշմարտութիւն կրկնում կը լի-
նենք, եթէ ասինք, որ մեր երկրի բարեկեցու-
թեան հոգը գործունէրէն մէկն էլ լաւ կազմա-
կերպւած, իր կոչման բարձրութեան վրա կանգ-
նած ուսումնական կարող է լինել: Անխա-

ղախ, անկաշառ, իրանց գործին անձնուէր վար-
չական անձանց պէտքը այդպէս զգալի է, որ
ամեն անգամ, երբ Անդրկովկասի ոստիկանական
վարչութեան մէջ երևան է գալիս այդպիսի մի
անձնակազմութիւն, նա ամբողջ աչքում հերոսա-
նում է: Բազմաթիւ առօրեայ դէպքեր և դա-
տաւանական պրոցեսներ ցոյց են տալիս, որ
չափ զեղծումներ և չափ չարագործութիւններ
տեղի չեն ունենաց, եթէ այս կամ այն տեղի
ուսումնական տեսչերը իրանց պաշտօնին և
կոչման համապատասխան խնամքը լինելին: Խու-
րաբով գործը միայն մի անկիւնը բարձրացրեց
այն վարագործի, որի ետև թաղնված են երկրի
քաղաքացիական կեանքի կանոնաւոր զարգա-
ցումը խանգարող բոլոր չարքները:

Վեր առնենք մի նորագոյն օրինակ: Ու՛մ
յայտնի չէ, որ հարուստ և հաշկաւոր Բաղու-
նի կեդրոնութեամբ և անմարտութեամբ առա-
պելական հոգալ էր ստացել. միլիոնի բեռնակշիւ
ունեցող քաղաքային վարչութիւնը, տասնեակ
տարիների ընթացքում, անորոշ հանդիսացաւ նոյն
խալ փողոցները մարքել և փորել չափաւոր
չափահաս նպատակներ պայմաններ ստեղծել
ազգաբնակչութեան համար: Բայց, յանկարծ, բազ-
մի բերմունքով, Բաղու՛մ նշանակվում է մի ու-
սումնական, որ ամենին նման չէ իր նախորդ-
ներին: Եւ ահա, կարճէք մոդական դասադրի-
նարումով, Բաղու՛մի կեդրոն և զարգացող փողոց-
ները մարքվում, սրվում և միանգամայն կերպա-
րանափոխվում են: Այն ինչ որ չը կարողա-
ցաւ անել տարիների ընթացքում, ահա ինչ
գումարներ ծախսելով, Բաղու՛մ քաղաքային
վարչութիւնը, նոր ոստիկանապետ իշխան Վլա-
կովսկի կարողացաւ իրագործել մի ամակալ
մէջ: Եւ դրա համար նա ուրիշ ոչ մի միջոցի չը
գիտէր, բացի այն, որ ցոյց տուէր անպողտեղ
կամը, վճարական և անկաշառ բնասողութիւն
և գործելու եռանդ: Այդ բաւական չէ. Բաղու՛մ,
ինչպէս ապացուցեց Ստարոսելսկու սպանութեան
գործը, չափ ոճորդութիւններ, քրեական յան-
ցանքներ անյայտ են մնում, յանցաւորները ան-
պատիժ, զլիաւորապէս այն պատճառով, որ ու-
սումնական կարող այս և այն հարուստ թուրք կա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎՈՐՈՆՅՈՎ

(Շարունակութիւն)

Չափաւոր գոյ մնալով իրան արած ընդու-
նեղութիւնից՝ իշխան Վորոնյով հետեւեալն էր
գրում Ներսէսին Ներսէսին.
«Իմ առաջին պարտականութիւնն է սրտաղին
հորհակալութիւն յայտնել իմ և իշխանուհու կող-
մից այն բոլոր հորհուրդների և փաղաքանքների
համար, որ մենք ստացանք ձեզանից Եւրոպա-
նում, այլ և նրա համար, որ դուք մեզ ցոյց տը-
վեք այն բոլոր գեղեցիկ և օգտակար աշխատանք-
ները, որ ձեռնարկել էք ձեր փառքի և Աստու-
ծու եկեղեցու համար: Ձեր ամբողջ ժողովուրդը
և այս ամբողջ երկիրը այդ բոլորից տեսնում է,
որ հայոց եկեղեցին ունի այժմ արժանաւոր դը-
րուկ և միայն պէտք է ափսոսալ, որ կորան ա-
ւելի քան տասն տարիներ, որոնց ընթացքում
դուք շատ օգտակար բաներ կանխել ամեն գոր-
ծերի մէջ: Բայց Աստուծո՛ւ ձեզ դեռ շատ տարիներ
կը պահէ և դուք արժանաւոր պարգի կը ստա-
նաք, տեսնելով ձեր անխնայ և իսկապի ջանքերի
աշխուրդները: Իմ ձեռնարկական օֆիցիէրը անյապաղ
կուղարկել ձեզ մօտ՝ նոր գիւղի յատակագիծը
կազմելու ձեր ցանկութեան համաձայն. ուղար-
կում եմ ձեզ այն թղթի պատճէնը, որ ես տա-
լիս եմ օֆիցիէրին՝ ղեկավարելու համար. ի հար-
կէ, ձեզանից է կախված անել փոփոխութիւն-
ներ, ինչպէս ձեզ հաճելի կը լինի: Իմ համար
հետաքրքրական և հաճելի է, որ կը լինի մի լաւ
և յարմար արտադրան (վարարապատ գիւղը)
համարեալ այն տեղում, ուր մենք առաջին ան-
գամ (1804 թվին) կուտում էինք Արարա-Միլլոյի
դէպ:

«Իշխանուհին համարում է ձեր ձեռքերը և

մենք միասին երկուստ խնդրում ենք ձեր օր-
հուրիւնը և անհամբեր կը սպասենք ձեր գա-
լուտեան թիֆլիս: Հաւատացե՛ք իմ սրտաղին
յարգանքին և անձնակազմութեան, որով յաւի-
տեան կը մնամ, և այն: Իշխան Մ. Վ. օրոհ օ փ:

Այդ ճանապարհորդութեան ժամանակ իշխա-
նուհին Վորոնյովի միջոց յաջաւ բաց անել Ներ-
սէսին թիֆլիսի Մ. Նուռնի կանանց Բարեգոր-
ծական ընկերութեան ճիւղը և հիմնարկել այն-
տեղ օրիորդական դպրոց յանուն Հայաստանի
լուսաւորելի Մ. Հռիփսիմէի: Իշխանուհին 1848
թվի դեկտեմբերի 18-ին գրում էր Ներսէսին.
«Ձեռնարկելով բաց անել Ներսէսին Մ. Նու-
ռնի կանանց Բարեգործական ընկերութեան
ճիւղը, որի նպատակը կը լինի հիմնարկել այդ
քաղաքում մի միջնակարգ դպրոց աղջիկների
համար և մշտապէս հսկել աղջիկների մտաւոր և
բարոյական զարգացումը վրա, ես, ամենից ա-
ռաջ, ուզում եմ դիմել ձեր Վեհափառութեան
և խնդրել ձեր ծայրագոյն հովուապետական օր-
հուրիւնը մեր ընկերութեան սկսած այս օգտա-
կար գործի համար: Սկսելով այսպէս, ես համոզ-
ված եմ, որ մենք կունենանք կատարեալ աջա-
գործիւն և կարճ միջոցում կը բացվի դպրոցը,
որ միջոց կը տալ աղքատ ծնողներին կրթութիւն
տալ իրանց աղջիկներին ամենափոքր վարձով:
Այդ դպրոցը կընդունէ Մ. Հռիփսիմէի դպրոցի
անունը, ի յիշատակ Հայաստանի մեծ լուսաւորելի
կոյսի, և ես ուրախ եմ որ այսպիսով միասնա-
կան երկու սուրբ կանանց անունները, որոնք լու-
սաւորել են այդ երկրի Աւետարանի լոյսով: Իմ
ամուսնին խնդրում է իր համար ձեր օրհու-
րիւնը, յանձնելով իրան և մեր երեխաներին ձեր
աղօթքներին, բարի հովիւ: Ամենախոնարհ յար-
գանքով և այլն: Իշխանուհին Ներսէսին Վ. օ-
րոհ օ փ:

Ներսէս մեծ ուրախութեամբ վերաբերվեց այդ
գործին և իր կողմից մի խոշոր գումար նուիրեց:
Մ. Հռիփսիմէի դպրոցը բացվեց 1850 թվականի
յունիսի 2-ին և յանձնվեց տեղական նահան-

գապետի կողմ: Ներսէսին Նազարովայի խնամ-
քին: Իշխանուհին Վորոնյովայի յանձնարարու-
թեամբ, տիկին Նազարովա յաճախ գնում էր Եւ-
րոպայի, տեղեկութիւններ էր տալիս Ներսէսին
դպրոցի գործերի մասին և ամեն անգամ վերա-
դառնում էր պարզեցնելով: Աշակերտուհիների ա-
ռաջին ձեռնարկները, իշխանուհին Վորոնյովայի
ցանկութեամբ, ուղարկվեցան Ներսէսին: Տիկին
Նազարովա գրում էր այդ առիթով.

«Իմում եմ ձեր Վեհափառութեան խնար-
հաբար խնդրելով բարեհաճութեամբ և զիջողա-
բար ընդունել Մ. Հռիփսիմէան դպրոցի աշա-
կերտուհիների աշխատութեան առաջին պտուղ-
ները, որոնց վրա ամեն մէկը սեփական ձեռքով
մակարդել է իր անունը: Այս փոքրիկ աթոռը
ասեղնագործել է օրիորդ Քալանթարեան, առանց
որ և է կողմնակի օգնութեան, ինչպէս նաեւ այս
թաղիկնակը, որ Ներսէսին Նախարարութեան
ձեռագործն է: Նրանք յոյս ունեն, որ ձեր Վե-
հափառութիւնը արժան էր համարել ամեն օր
գործածել նրանց ձեռքի գործը և այն ժամա-
նակ նրանք իրանց աշխատութեան համար վար-
ձաւորված կը համարեն իրանց: Ձեր Վեհափա-
ռութիւնը կը բարեհաճի տեսնել, որ այն մի տա-
րիներ զարգացում, անօգուտ չէր և նրանք դուր
ժամանակ չեն կորցրել: Ես համոզված եմ, որ
երբ դուք կը գաք Ներսէս և ձեր այցելութեան
կարճամիջոցներ դպրոցը, դուք կը զարմանաք,
տեսնելով, թէ ինչ առաջադիմութիւն են անում
երեխաները իրանց ամուսնուհի բոլոր առարկանե-
րի մէջ: Սրա հետ ուղարկվում եմ այն իրերի տը-
պած ցուցակը, որոնք չուտով վիճակահանու-
թեան պիտի դրվեն մեր դպրոցի օգուտին: Ձեր
Վեհափառութեան համար երեխ անորոշելի կը
լինի տեսնել, թէ որպիսի եռանդով և պատրաս-
տակարութեամբ այստեղի բնակիչները, — ոչ ծա-
ւալորները, — օգնում են բարի գործին:

1851 թվականին Ներսէսը Հռիփսիմէի դպրո-
ցին նուիրեց մի մեծ կտոր եկեղեցական հող,

Իարաչիչաղում, որպէս զի այդտեղ աշակերտու-
հիների համար ամարային բնակարան չիւրի:

1850 թվականի դարնանը Ներսէսը գտնվում
էր Թիֆլիսում: Երբ յայտնի դարձաւ, որ նոյն
տարւոյ աշնանը Փաղաժառանգ Յեսարիկէ Ա-
լեքսանդր Նիկոլայի վրա պիտի այցելէ Վովկաւը,
Ներսէսը, Թիֆլիսում բոլոր կարգադրութիւնները
անկողնց յետոյ, շտապեց Եւրոպայի, որպէս զի
պատրաստովի Օդեսոսի մէջ իր ընդունելու:
Նա այնչէ չը ինչպէս այդ ընդունելութիւնը փա-
ռաւոր դարձնելու համար: Բաւական է լինել, որ
Մոսկովայից յատուկ խոնարհ բերել տուէր, որե-
կան 10 րուբլի վարձով: Բոլոր ծախսերը հաս-
նում էին 14 հազար բուրլի գումարին:

Հոկտեմբերի 6-ին Յեսարիկէ մուտք գործեց
Եւրոպայի. Ներսէսը վաճառեց երկու վերստ Թե-
ռու սպասում էր նրան: Իշխան Վովկաւը, Թե-
րաժառանգը և Վովկաւը միմեանց ողորմա-
ցին և համարութեան: Վանքի դռների առաջ
հոգեբանականութիւնը խաղով և խալվաւով ընդու-
նեց Մեծ Իշխանին և չարականներ երգելով ու-
ղիկեց նրան դէպի տաճար: Փաղաժառանգի
ոտները տակ փռված էր ոսկեթել զրպակ: Հա-
մառօտ մարդկանց յետոյ՝ Փաղաժառանգը համ-
բուրեց Եւրոպայի սրբութիւնները և մատուցնե-
րը: «Իրանից յետոյ, գրում է Ներսէս, մենք Նո-
րին Բարձրութեան մատուցեց հայերէն լեզուով
գրած մի ուղերձ, որի մէջ նկարագրեցինք դէպի
ուսուսաց մեծ պետութեան ամենաաղքատը դա-
նը տաճար ամենապարզապէս և հաւատարմա-
կութեան նուիրական զգացմունքները, որ վաղե-
մի ժամանակներից ոգևորում էին բոլոր հայերին:

Ներկայեան չեղեց հրապարակութիւն կար վաճառ-
ման ժամը 3-ին տեղի ունեցաւ հաշիկերով, որի
ժամանակ Ներսէս առաջարկեց Փաղաժառ-
անգը առաջարկեց Ներսէսի կենացը: Միւս օ-
րը Փաղաժառանգը դնաց Ներսէսին:

(Վր չարունակի)

պիտանի աղբյուրներն է ենթարկված և իր ներհանգանակները նրանց է ստանում: Այս առաջ, ինչպես վերոհիշյալ դատող ի վեր, մի գեղեցիկ օր, այդ թուրք կրեոստները խմանում են, որ ուստիկանությունը ոչ մի դանդաղություն չէ դնում նրանց և ամենաանարակ բանակարի ու բանադրի մէջ. նրան, կրեոստին, նոյնպէս կանչում և տանում են ոտովկանությունը դրանքնակելը, ինչպէս պէս կանչում և տանում են հասարակ բանադրին: Այս ոտովկանությունը այդպիսի նոր, Բագուում չը տեսնված, բայց օրինական վերաբերմունքի հետեւանքն այն է լինում, որ Ստաբուսիւսու սպանությունն խորհրդաւոր գործից հետոհետէ լայնվում է վարդապետ և հարց է ծագում այդ գործի վերաբերմունքն մասին...

Համոզմունքն արձանագրելով այդ փաստը, պէտք է յիշեցնել սակայն ժողովրդական առածը, թէ «մի ծաղիկով դարձնէ չի լինի»: Թէ նորերս Գուկիայիսում տեղի ունեցած ոտովկան Ախլէ-դիանու քրեական դատը, որի մէջ հանդէս դուրս եկան նախկին ոտովկանապետ տիրապետակ Սվի-մոնովի սկրապուլոսիւնները, թէ Ստաբուսիւսու կու և Խուրաբուի յայտնի գործերը պարզ ցոյց են տալիս, թէ ինչքան անբարար է մեր երկրի ոտովկանական վարչութեան կազմակերպութիւնը: Սերակայանի յանցանքները տեղեկելով դեմաւորներին ամբողջ գործերը անհետացնել ուժ-րագործութեան հետքերը թաղելու համար, քրեա-նութիւնները կատարել ոչ թէ ճշմարտութիւնը երևան հանելու, այլ թաղելու: Համար, տան-ջանքներով հարկադրել մարդկանց սուտ վկայու-թիւններ տալ, քարոզ անելու իրողութիւններ են, որոնք ցոյց են տալիս, թէ մեր ոտով-կանութեան մէջ բուն են դեռ շատ վտանգաւոր սովորութիւններ, որոնք կարող են արմատախիլ լինել միայն վճռական և արմատական ընթաց-մանքով նրա կազմի մէջ:

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Շարաթ, փետրվարի 7-ին, հայոց Հրատարակ-չական ընկերութեան օգտին սիրողները խումբը ներկայացրեց երրորդամարդ Յովհաննէս Ստեփո-կեանի: Նոր պէնտան, «Սիրտ անուամբ»: Պիւսայի բովանդակութիւնը և քննադատութիւնը կը տրա-վի «Մշակ» հետեւալ համարում: Այսին մէջ կը խօսենք միայն դերակատարներին մասին: Մեր բեմի վետերան Ամիրան Մանուկեան, ի հարկէ, մեծ դուրսնութիւն պատճառեց հասարակութեան իր չորսնակ խաղով, բայց այդ երեկոյեան հերո-սուհին օր. Տ. Ստեփանեանն էր (մեր յայտնի դրամատուրգի աղջիկը), որ իր վերին ատուհա-նի զգացումը և գեղեցիկ խաղով մեծ ազդեցու-թիւն գործեց հասարակութեան վրա: Ներսիսի տարադի-զարդութիւնը կայանում է այն կախարհա-կան ուժի մէջ, որով նա կարողանում է յուզել հանդիսատեսներին սրտերը: Այդ կախարհական ուժը կայ օրիորդի մէջ, որի ձայնը ունի զգա-ցունակ արտայայտելու բոլոր շնչերը: Բա-ցի դրամիք՝ աչքի է ընկնում օր. Սու-դուկեանի խաղի մէջ և այն ներդաշնակու-թիւնը, որ միշտ նկատվում է նրա ձայնի երկն-ներին, աչքերի հայեացքին, դէմքի արտայայտու-թեան, շարժանքների և մարմնի դերքի մէջ, ներդաշնակութիւնը, որ նոյն կալ զարմանալի է մի երրորդամարդ և անփորձ սիրողի մէջ: Մեր կարծիքով, օրիորդը կարող է ապագայում ա-ռաջնակարգ տաղանդ լինել, եթէ իրան նուիրի հայկական բեմին: Տաղանդները թաղել յանցանք է: Մնացած դերակատարներից իրանց չորսնակ խաղով աչքի էին ընկնում օր. օր. Մէլքեան և Արեւիկայեան և պ. պ. Ս. Վարդանեան ու Ն. Արեւիկայեան: Պ. Վարդանեան աշուղ տա-րաւ իր դժոյն, բայց վտանգաւոր դերը, վտանգաւոր նրանով, որ առիթ կարող էր տալ կեղծ պիւնիկական արտայայտութիւններին: Այդ պարտի դերերն էր և դերն էլ ուշ էր յանձնված նրան. մենք դրանով ենք բացատ-րում մի քանի անհարթութիւնները նրա խաղի մէջ. ընդհանրապէս պ. Վարդանեան մեղ թվում է յոյսեր տուող ապագայի համար: Թատրոնը ամբողջապէս լի էր. դրած էին շատ աւելորդ ա-թիւներ: Հասարակութիւնը ոգևորված ծախիա-նութիւններով վարձատրեց զլիսաւոր դերակա-տարներին և երրորդամարդ հեղինակին: Տ. Յ.

ՆԱՄԱԿ ԲԱՆՈՒԹԵՆ

Փետրվարի 6-ին, երեկ, փետրվարի 5-ին, սովորական դնացքով այստեղ հասաւ ամենայն հայոց Վաթիկանը: Վեհափառ հրաժարվել է յատուկ դնացքից, որը առաջարկվել է այստեղի հասարակութեան կող-մից: Սերակայանի կայարանում դեմաւորները էին դուրս եկել ոտովկանապետ իշխան Վ. Գիւնտի, քաղաքապետի պաշտօնակատար Բեղեմյանի, ուս-

րախի անդամները, մի քանի թուրք ձայնաւոր-ներ և խումբ ընդհանուր հասարակութեան բո-լոր խաղերից: Վայելարակն սենեակները մոտե-րուն պէս պ. Բեղեմյանին քաղաքի կողմից «բա-րի դալուստ» մարդկեց մի կարճ ատենաբանու-թեամբ: Ապա հայ հասարակութեան կողմից փորձեց խօսել պ. Հ. Մեղիքեան, բայց Վեհա-փառը չը բարեհաճեց ունենալ իր նկատման: Այսու-հետեւ արմատաւոր սատակ յոյնաժողովներ: Վաչա-րանից Վեհափառի քառաձի կառքը, չըջատու-ված բաղմաթիւ կառքերով և հետեւակներով ու-ղեկութեց դէպի երեկոյեան: Երեկոյեան զուգու և ե-կեղեցում երեկոյի խումբը կառավարում էր յայտնի երգիչ պ. Շահաբեան: Երեկոյեան դուրս դալով՝ ծերունի Հայրապետը նոյն շուքով ուղե-ւորեց դէպի Մարաշիւրական ընկերութեան հոյակապ շինութիւնը, ուր թէ դաշինք և թէ կիր սենեակները վայելուչ կերպով կահաւորված էին Վեհափառի դաստիարակ աւելով: Սուտ մի ժամ անցնելուց յետոյ՝ այցելութեան եկաւ նա-հանգապետ Բոգէ, որը տասն թուական չափ տե-սակցութիւն ունեցած: Նահանգապետի մեկնե-լուց յետոյ, ներկայացան ներկայ եղող հանդիսա-կանները, որոնք մուտք էին գործել տոմարակն-րով: Տեղի ունեցան սովորական, ընդհանուր խո-սակցութիւններ: Վեհափառը, ի միջի այլոց, նա-խաճառեց արդիւնաբերութեան վերաբերեալ մի քա-նի հարցեր տալով ցանկութիւն յայտնեց ան-ձամբ տեսնել և դադարաւ կազմել թէ նախկին արդիւնաբերութեան և թէ կերպարանգործութեան մասին:

Այսօր, ժամի 12-ին, Վեհափառը այցելեց պ. Նահանգապետին: Վաթիկանը այստեղ կը մնայ, ինչպէս լուրս ենք, 4—5 օր:

Ինչպէս երէկ, այնպէս և այսօր քաղաքում տիրում է օրինակելի կարգապահութիւն, չորսնի-նոր ոտովկանապետ Վ. Գիւնտի: Ամենքը ճորձ-ւանքով են խօսում և գովում այն եռանդը ու վարչական շնորհը, որ այս երկու շարքերում արտայայտեց նոր ոտովկանապետը: Կեղտուտ Բա-գուս միանգամայն մարդկած է: Երկու կերպա-րանափոխված է, մի ուղեգրութեան արժանի կերպարանափոխութիւն, որ վաղուց, շատ վա-ղուց ցանկալի էր, բայց չը կար: Աչքի ընկնող կարգապահութիւնը առիթ տուեց Վաթիկանի և նա առանձին չորսնակութիւն յայտնելու և դո-վելու անհաճախ ոտովկանապետին:

Ն. Գալեան

ՆԱՄԱԿ ԶՈՒՆՈՒՅ

Փետրվարի 2-ին Մեր քաղաքային ինքնավարութիւնը, չը մտած իր գործունէութեան շրջանը, ծանր կրեղին է ենթարկվում: Նորոսիքը քաղաքապետը, գանա-զան պատճառներից ստիպված, հրաժարվում է իր պաշտօնից. հրաժարվել է նորերս և ուղար-կայի մի անգամ: Այս առաջ հայտնվում է Վեհափառը: Վեհափառը ինքնավարութեան ղեկավարները առաջին քայլերից—գուցէ դրովմ զաւարի աղ-բառ իրաւից—ստեղծել են այնպիսի խոչըն-դոսներ, որ անկասկած ինքնավարութեան վրա ին-անցնողները պիտի լինեն կամ ներկայանալու անկասկած մարդիկ, կամ ինքնակներ, պէնտան ստացողներ: Նրանք սահմանել են այնպիսի չըն-դան ուժերից, ինչպէս են քաղաքապետի համար 1500 ր. (առանց օր և և կողմնակի ծախսի) «չուք» համար—на представительство), իսկ ուղ-րախի անդամներին 1000-ական թուրքի: Իսկ ինչ և ինչ պահանջներ չեն դնում ընտրողնե-րի առաջ, և ի հարկէ իրաւացի,—նրանք պի-տի լինեն կրթված, քաղ ծանօթ օրէնքներին, ուրիշ տեղերում գործող ինքնավարութեան մար-մինների հետ, տեղեակ քաղաքային, ֆինանսա-կան տնտեսութեան, պլիւս անհատաւոր իրանց ստանձնած գործին, գործունեաց... Ո՞ր համապա-տասխանողը այս բաղմապետակ պայմաններին, —կաւեղանքը մենք և անհրաժեշտ պայմա-ններին—լը համաձայնի ծառայել քաղաքին այդ-պիսի չնչին ուժերով, թէ և սոված է թէ՛ «նչ միայն հայով է կենդան մարդը»:

Այս գլխաւոր կէտի վրա ենք դարձում ձայ-նաւորներին և քաղաքի հասարակութեան ուղա-դրութիւնը, եթէ ցանկանում են, որ գործերը ընթանան իրանց կարգով, որ լրով վայելեն ինքնավարութեան պատշաճը: Կրկնում ենք. մեղ միայն կարող են առարկել թէ քաղաքի այժ-մեան սահմանափակ միջոցները այդ քայլն անե-լու արդեւ են հանդիսանում, բայց ոչ մի հեռա-պետ իշխան Գիւնտին բաւական երկար պէտք է մնայ Պետերբուրգում, որովհետեւ նա իր հետ տարել է բաղմաթիւ գործեր և ծրագրեր, կա-ռավարչական բարձր շրջաններում ընթացք տա-լու համար:

Պետրոս Զաքարեան

ՆԱՄԱԿ ՆՈՒՆՈՒՅ

(Հեղադրեալ է)

Տաղանդ, փետրվարի 8-ին Ողջունում ենք «Մշակ» 25-ամեայ յօրեկանը և սրտանց ուրախ ենք նրա ամենօրեայ լինելուն: Թող Աստուած աւելի եռանդ ու տոկոսութիւն տայ՝ մեծ հրապարակաւս Արծրունու բարձր գործի շարունակողներին՝ անշեղ կերպով առաջ դնալու այս փշոտ ճանապարհով:

Կատարել Մալուշեան, օրիորդներ՝ Գիւզա-բեան, Նահապետեան, Յակոբեան, Լազարեան, Սահանեան, Գեղեցեան:

Վրամիւսիկ, փետրվարի 8-ին

Շնորհաւորում ենք յարգելի «Մշակ» 25-ամեա-կը: Ընդունեցէ մեր ուրախութեան արտայա-տութիւնը «Մշակ» ամենօրեայ լինելու առիթով: Նազար Նազարեան, Կարապետ Յարու-թիւնեան, Մինաս Մինասեան, Յակոբ Սոս-րովեան, Ալեքսան Թումանեան, Նիքոն Գա-րեթեան, Արամ Տէր-Բարսեղեան, Ալեքսան-դր Գիւրջեան, Արուստ Գարութիւնեան, Խաչատուր Անաստասեան:

Իրերեկ, փետրվարի 6-ին

Շնորհաւորում ենք «Մշակ» ամենօրեայ հրա-տարակութիւնը: Արսէն Խաղաչեան, Խաչատուր Խաղա-չեան, Ռուբէն Մկրտչեան:

(Պատու)

Բագու, յունվարի 28-ին

Համայն հայոց ազգի հետ միասնակցելով, ուղարկում ենք մեր անկեղծ, սրտալին շնորհա-ւորութիւնը պաշտելի «Մշակին»՝ նրա արդիւնա-ւոր, աշխու գործունէութեան ջրան և հինգ ամեա-կի առիթով: Անկեղծ սրտից ուրախ ենք սիրե-լի «Մշակին» ամենօրեայ դաւանալու, ցանկանալով նրան անսահման աղջողութիւն և յարատեւութիւն: Կեցցէ «Մշակը», կեցցեն նրա արժանաւոր գաղա-փարքները:

Ս. Գ. Հայրապետեան, տ. Ա. Մելք-Սու-կաճարեան, օր. Ս. Տէր-Յովհաննիսեան:

Արշ, յունվարի 23-ին

Անկեղծ սրտով և անսահման ուրախութեամբ ողջունում ենք «Մշակ» փառաւոր գործունէ-ւթեան 25-ամեակը և ամենօրեայ լինելու: Խա-չատուր ենք մեր ուրախութիւնը շատերի հետ, գո-ւրդով մեծ հիմնադր անմահ Արծրունու յարգը-նիկ անհուն եռանդով: Թող ծածանի «Մշակ» դրօշակը այժմ և յաւիտեան:

Լեւոն Վահանեան, Գարեթեղ Վարդանեան, Յարութիւն Ամենդիւնեան, Գրիգոր Պողոսեան, Վարդան Մեղունեան:

Թիֆլիս, յունվարի 27-ին

Վերջապէս մեր երկար տարիների տնչանքն այսօր իրագործված է. փետրվարի 1-ին մենք բաղդ ենք ունենում արծառնաւոր մեր սիրա-նք լրագիրն անմահ օր կարող: Մեր բերկու-թիւնն անսահման է, մեր խնդրութիւնը ան-չափ: «Մշակը» մեղ դատարարակց ու կրթեց, լրատարանելով մեր միտքը, հասկացնելով մար-դուս կուլումն ու պարտաւորութիւնը: «Մշակը» մեղ ցոյց տուեց այն շախիդ, որ կուլում է ար-դարութիւն, ճշմարտութիւն, աշխուշութիւն... Ող-ջունում ենք ամենօրեայ «Մշակ» և յերմանա-նութեամբ փափագում, որ նա առաջնակարգ էլ իր առաջնակարգ դրօշակը առաջ տանէ նոյն չա-ղով և քաղաքական, ինչպէս անցած փայլուն ջրան և հինգ տարիները: Կեցցէ «Մշակը», կեց-ցեն Արծրունու անմահ գաղափարները:

Յակոբ Գրիգորեան, Արստուր Գրիգորեան, Յովհաննէս Գրիգորեան, Խաչատուր Ամիր-դեան, Կեղամ Սողոմոնեան, Խաչատուր Տէր-Խաչատրեան, Գր. Սարգսեան, Արստ. Շահ-պարսեան, Սարգիս Մնացականեան, Գ. Ա. Սարգսեան, Գ. Մկրտչեան, Յարութիւն Մի-րիկեան, Գարեթի Տէր-Ստեփանեան, Արշակ Կարապետեան:

Թիֆլիս, փետրվարի 3-ին

Լուրին համակրելով «Մշակ» աղջողութեանը, որ հիմնեց մեծ հրապարակաւս Գրիգոր Արծրու-նին և ուրախանալով ձեր աղջողութեանը, ար-տայայտում ենք անչափ ուրախութիւն, տեսնե-լով սրանից յետոյ «Մշակ» ամենօրեայ: Շնոր-հաւորում ենք երրորդամարդութեան յատուկ մա-քուր սրտով:

Ալեքսանդրեան ուսուցչական ինստիտուտի հայ ուսանողները՝ Գարեթի Տէր-Ստեփանեան, Ստեփան Ստեփանեան, Սարգիս Մանասեան, Շալոմեղ Շալոմեղեան, Սամուէլ Միքայելեան, Ալեքսանդր Թովմեան, Վարդան Սուքիասեան, Գրիգոր Մկրտումեան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս լուրս ենք, կուլանան կառավարչա-պետ իշխան Գիւնտին բաւական երկար պէտք է մնայ Պետերբուրգում, որովհետեւ նա իր հետ տարել է բաղմաթիւ գործեր և ծրագրեր, կա-ռավարչական բարձր շրջաններում ընթացք տա-լու համար:

Անդրեան «The Catholic Times» լրագիրը հա-ղորդում է, որ մի բողոքական հայ քարոզիչ՝

Լեւոն Չէքէմեան օժիկ է անգլիկան և կեղեցու արքեպիսկոպոս Լոնդոնում: Նոր արքե-պիսկոպոսը նախ Մալթիայի անտանական (տիտղոսաւոր) եպիսկոպոս է եղել և վերջին կա-տորածների ժամանակ, 1895-ին, ապաստանել է Լոնդոն: Չէքէմեան՝ անգլիկան սովորութեան համաձայն, այժմ կրում է «մեծ» պատ. լորդ արքեպիսկոպոս տիտղոս:

Կ. Պոլսից հաղորդում են Վիկտորի «Freie Osm. Post» լրագիրն. «Համբաւաւոր «Մշակ» լրա-գրի ամենօրեայ հրատարակութեան լուրը մեծ հա-ճութեամբ ընդունվեց հայկական շրջաններում»:

Մեղ հեղադրում են Կարսից, փետրվարի 8-ից. «Տիրութեամբ հաղորդում ենք, որ փետրվարի 7-ին, երեկոյեան, «Մշակ» թղթակցը Խաչատուր Մառանկոյեան վախճանվեց տիֆլիս: Մենք, և մեղ հետ՝ անկասկած մեր ընթերցողները, ան-կեղծ ցուում ենք դաւանալու մի համեստ աշ-խատար-թղթակցի վաղաճառ կորուստը: Խաչա-տուր Մառանկոյեան մէկն էր այն երրորդամարդ-ներից, որոնք արձագանք տալով «Մշակ» հրա-ւերներին և անձուէր դիմուր գրելով նրա գաղափարներին, հանդիսացան իրեն մի-մի կուլող ոյնք՝ դաւառական քաղաքներում: Մեր ընթեր-ցողները շատեր են իշտում են, որ 80-ական թվականներին նա խիստ հալածանքի ենթարկ-վեց մեր խաւարածուխների կողմից՝ կրօնական պօլեմիկայի ժամանակ բռնած իր դերքի համար: Հանգուցեալը գործում էր ուսուցչական ասպա-րեղում և 80-ական թվականներից արդէն գրում էր «Մշակ» մէջ, սկզբում Ախալքալաքի և Ա-խալքալաքի, և վերջին էլ Կարսից: «Մշակ» խմբագրութիւնը երէկ մի հեղադրով յայտնեց հանգուցեալի ընտանիքին՝ իր ցաւակցութիւնը այդ վաղաճառ կորուստի համար:

Նկարագրելով ամենայն հայոց Կաթողիկոսի մեկնելը դէպի Բագու, «Տարագր» շարքաթիւնը, —եթէ միայն հաւատարմը նրա խօսքերին—հե-տեւալ տխուր փաստերն է հաղորդում. «Բացա-կալ էին, երեք քահանայի բացառութեամբ, Թիֆ-լիսի մնացեալ բոլոր անհամար քահանայները: Ս. Կաթողիկոս իսկ երեւոյ վեհապետում միայն այն ժամանակ, երբ Վ. Տեփան Կաթողիկոսը դաւադանք ձեռնիւ արդէն մեծ դաշինք վաղուց էր դուրս եկել և քաղաքը ուղղում էր դէպի դա-ւիթ: Այստեղ պարզվեց, որ առաջնակարգ կա-րգաղութեամբ պատկրած կառքը դեռ չէր ե-կել... Կարելի եղաւ մի քանի քայլ էլ սպասել սակայն կառքը չեկաւ և հայոց Հայրիկը Թիֆլիսից ճանապարհ ընկաւ դէպի երկաթուղու կայարանը հասարակաց (общественный) հաւթով: Այդ բաւական չէ. դեռ նորին օժոժեալն նստած կառքը էլ կորուցած էր և հայոց Կաթո-ղիկոսը ստիպված եղաւ այդ կառքից իջնելու և նեղ, ցիւտ, բոլորովին մոթ փողոցով մի շարք կառքերի միջոց անցնել ոտով և դարձեալ մի ու-րիշ հասարակաց կառք նստել: Կամեաւորա-նորը անտարբէր են: Ո՞ր էին մեր կրեոստների նը-ծողները... Ինչու այդ օրը հայոց Կաթողի-կոսին չէին բարեհաճում ուղեկցել իրանց սե-փական կառքերով: Մեր բողոքը, որ վեհապետի մեծ դաշինքի ջանքեր վառեն, մնաց անհետանք: Ինչու: Արդեք պայտանքն մի ջրան կօպիկ մե-մեր, թէ այլ է անհաւարը... Եթէ միայն այդքանը...»

Թիֆլիսի քաղաքային դռանն որչիւ է ամե-նախնամ միջոցներ ձեռք առնել, որ չլուսող ա-նասունների միւ չը վաճառվի քաղաքի չուկանե-րում: Ապանդանքում արդէն պատրաստ է այն հրապարակը, որտեղ պէտք է անասունները նա-խապէս ընկնեն և ապա մտնեն: Կրակի, փետր-վարի 8-ին, Թիֆլիսի քաղաքային ձայնաւորներից կաղնված մի յատուկ յանձնաժողով, մասնադե-պիկ հետ միասին, այցելեց սպանդանոցը և մանրամասն ծանօթացաւ նրա ներկայ պայման-ների հետ: Յանձնաժողովը մշակում է կանոնադ-րութիւն, որով ոչ մի մնացու տուար չէ կարող ծախվել՝ սպանդանոցի հրապարակից դուրս:

ՂՈՒԲԱՅԻՑ մեղ գրում են. «Անցեալ տարվայ երաշտութեան պատճառով մեղանում չը տեսն-ված թանգութիւն է տրեւում: Կարելի է արդեթ երեւակայել, որ Ղուբայում և նրա հարևան գա-ւառում գոյութիւն ունենաւ այն «ղրթուղը» որը այժմ ունէ: Քանի օր առաջ այստեղ ոչխա-րի միւր ծախվում էր ֆունտը 15 կ., հարց է կ., գարին ծախվում է 70 կ. պուղը, իսկ ցորե-նի պուղը 1 ր. 20 կ.—գաւառի աղջաքանակու-թեան մեծամասնութիւնը կերակրվում է դարձ-և կորեկի հացով»:

ԳԵՐԵՆԵԻՑ մեղ գրում են. «Մոտ երկու ա-միս է, որ ընտրված են մեր երեկոյեան համար

